«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Ինտեգրված ուսուցման անհրաժեշտությունը «Գրականություն» առարկայի դասավանդման գործընթացում

Առարկան՝ «Հայոց լեզու և գրականություն»

Հետազոտող ուսուցիչ՝ Նաղյա Բաղդասարյան

Ուսումնական հաստատություն՝ Գավառի Պ.Ղանդիլյանի անվ. համար 2 միջն. դպրոց

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ԳԼՈՒԽ 1. ԻՆՏԵԳՐՎԱԾ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ 6

1.1. Ինտեգրված ուսուցման հասկացությունը, կարևորությունը 6

1.2. Միջառարկայական կապերի հաստատումը, դրանց դերը 8

ԳԼՈՒԽ 2. ԻՆՏԵԳՐՎԱԾ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ «ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՀՐ.ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ «ԿԱՆԱՉ ԴԱՇՏԸ» ՊԱՏՄՎԱԾՔԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ 11

2.1. Միջառարկայական կապերի հաստատումն ըստ առարկայական չափորոշչի 11

2.2. Հր.Մաթևոսյանի «Կանաչ դաշտը» պատմվածքիդասավանդումըևմիջառարկայականկապերիհաստատումը 14

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 19

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 21

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտականթեմայիարդիականությանհիմնավորում:

Ժամանակակից հասարակության, գիտության, արտադրության և մարդկային հաղորդակցության մեջ տեղի ունեցող ինտեգրացիոն գործընթացները նոր պահանջներ են դնում դպրոցական կրթության վրա:Առարկայական ուսուցումը չափազանց նեղ շրջանակ է ստեղծում կոնկրետ գիտակարգի ուսումնասիրության համար, իսկ վերջին ժամանակների հիմնական գիտական հայտնագործությունները կատարվել են սիներգետիկ[1]գիտակարգերիհամատեքստում:

Իր առարկայի դասավանդումը պլանավորելիս ուսուցիչը նախատեսում է իրականացնել միջառարկայական կապեր. դժվար է պատկերացնել գրականություն ուսումնասիրել առանց պատմության, աշխարհագրության, համակարգչային գիտության, լեզուների, մշակույթի և բնական գիտությունների իմացության: Սակայն ոչ բոլոր ուսուցիչները կարող են և նաև որոշակիորեն անհնար է տիրապետել վերը նշված բոլոր առարկաներին: Այս իսկ պատճառով ինտեգրված ուսուցման համատեքստում միջառարկայական կապերի կառուցումը պետք է լինի համապարփակ՝ հիմնված ճշգրիտ մեթոդաբանական հիմքի վրա: Մասնավորապես, միջին և ավագ դպրոցում ինտեգրված ուսուցումը պետք է իրականացվի ոչ թե էպիզոդիկ, այլ համակարգված կերպով: Խոսքը պարզ ինտեգրացիայի մասին չէ՝ պատմություն և հասարակագիտություն, հայոց լեզու և գրականություն, այլ խորը ինտեգրման մասին՝ տարբեր ցիկլերի առարկաների միջև՝ հումանիտար, բնական գիտություններ, ճշգրիտ գիտություններ, լեզուներ:

Ուսումնասիրելով «Հայոց լեզու», «Գրականություն», «Հայ գրականություն» առարկաների առարկայական չափորոշիչը՝ տեսնում ենք, որ դրանում էական կարևորություն է տրված ինտեգրված ուսուցմանը և միջառարկայական կապերին: Այսինքն բացի այն, որ ուսուցման գործընթացի արդյունավետ կազմակերպման արդի տեխնոլոգիաներն են ենթադրում ինտերգրված ուսուցման տարրերի կիրառում, նույն կերպ պետությունը առարկայական չափորոշիչների հաստատմամբ միտում է ուսուցիչներին էական ուշադրություն դարձնել միջառարկայական կապերի հաստատմանը:

Որքան էլ դրական է ինտեգրված ուսուցման ազդեցությունը ուսումնական գործընթացի համար, պետք է փաստենք, որ պետությունը, հանրակրթական և առարկայական չափորոշիչների միջոցով պահանջներ սահմանելով ոչ միայն դպրոցական կրթության առարկայական

[1] Սիներգիա ինչ որ արդյունք ստանալու համար իրար հետ գործակցող երկու կամ ավել իր կամ անձ, որ առանձին անհնար էր գեներացնել: Սիներգիա տերմինը ծագում է հունարեն synergia συνεργία synergos, συνεργός բառից, որ նշանակում է "աշխատել միասին":

վերջնարդյունքների, այլ նաև անձնական և միջառարկայական արդյունքների հասնելու համար, անկասկած, մեծացնում է ուսուցչի բեռը: Թեմայի արդիականությունն առաջին հերթին պայմանավորված է այն հանգամանքով, որ մեթոդական առաջարկությունների անբավարարությունը, ինտեգրված ուսուցման համատեքստում պետական ծրագրերի համակարգման բացակայությունը, հարակից առարկաների ծրագրերի բովանդակության մասին ամբողջական իրազեկվածության անհնարինությունը, առարկաների միջև կապի հաստատման փորձի բացակայությունը միջառարկայական ինտեգրման գործնական իրականացման հարցում խնդիրներ են առաջ բերում: Այս խնդիրները ենթակա են պարտադիր լուծման, քանի որ բազմակողմ միջառարկայական կապերի միջոցով որակապես նոր մակարդակով լուծվում են ոչ միայն սովորողների զարգացման և կրթության խնդիրները, այլև հիմք է դրվում ուսումնական գործընթացի համալիր տեսլականի ստեղծման համար:

Հետազոտության նպատակի և խնդիրների սահմանում: Հետազոտության հիմնական նպատակն է կատարելինտեգրված ուսուցման անհրաժեշտության դիտարկում «Գրականություն» առարկայի դասավանդման գործընթացում՝սովորողներիուսումնական գործընթացիարդյունավետությանբարձրացմաննպատակով:

Առաջադրված նպատակին հասնելու համար աշխատանքում դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- մեկնաբանել ինտեգրված ուսուցման հասկացությունը, կարևորությունը,
- ուսումնասիրել միջառարկայական կապերի հաստատումը, դրանց դերը,
- դիտարկել իջառարկայական կապերի հաստատումն ըստ առարկայական չափորոշչի,
- ուսումնասիրել Հր.Մաթևոսյանի «Կանաչ դաշտը» պատմվածքի դասավանդման գործընթացը և միջառարկայական կապերի հաստատումը:

Հետազոտության օբյեկտի և առարկայի սահմանում: Ընդհանուր առմամբ հետազոտության օբյեկտը իրադարձությունների դրսևորումն է ինտեգրված ուսուցման համատեքստում ուսումնական գործընթացի կազմակերպման ընթացքում,իսկ առարկան՝ ինտեգրված ուսուցման ապահոված արդյունքները սովորողների կոնկրետ խմբի համար: Որպես առանձին խումբ ընտրել ենք 7-րդ դասարանը: Ինտեգրված ուսուցման դասը վարելու ենք 7-րդ դասարանի «Գրականություն» առարկայի շրջանակներում: Միջառարկայական կապերի հաստատման համար առավել նպատակահարմար ենք գտել ընտրել Հր. Մաթևոսյանի «Կանաչ դաշտը» պատմվածքը:

Հետազոտության կառուցվածքը և ծավալը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, ընդհանուր մասից, որը բովանդակում է 2 գլուխ, որոնցից յուրաքանչյուրը բովանդակում է

երկուական ենթահարց, եզրակացությունից և առաջարկությունների մասից, օգտագործված գրականության ցանկից: Աշխատանքի ծավալը կազմում է 22 համակարգչային էջ (ներառյալ տիտղոսաթերթը, բովանդակությունը և գրականության ցանկը):

ԳԼՈՒԽ 1. ԻՆՏԵԳՐՎԱԾ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

1.1. Ինտեգրված ուսուցման հասկացությունը, կարևորությունը

Մանկավարժական գիտության մեջ ինտեգրված ուսուցման մասին շատ է խոսվում ու ներկայացվում են բազմաթիվ գիտական աշխատություններ: Ուսումնական գործընթացում միջառարկայական կապերի ձևավորման խնդիրը բազմիցս բարձրաձայնվել է, և կրթության պատմությունը նկարագրում է ուսուցիչների այսպես կոչված «միջառարկայական շարժումները»[2]: Այս ուղղությամբ առաջին քայլը միջառարկայական կապերի հաստատելման միջոցով ուսումնական գործընթացի բարելավումն էր՝ սովորողների գիտակցության մեջ բնական աշխարհի միասնական պատկեր ստեղծելու վերջնարդյունքով: Ինտեգրված դասի գաղափարն առաջին անգամ կիրառել են Ուրալի ուսուցիչներն իրենց մասնագիտական պրակտիկայում[3]: Այն լայն տարածում ստացավ, իսկ վերջին տասնամյակների ընթացքում գնալով ավելի ու ավելի համառ են փնտրվում տարբեր գիտակարգերի ինտեգրման հնարավորություններ, որը դիտվում է որպես միասնություն, տարբեր մասերի, տարրերի միավորում մեկ ամբողջության մեջ կամ կորցրած միասնության վերականգնում: Ցանկացած ինտեգրված մոդելի հիմնական տարբերակիչ բնութագրերն են համակարգվածությունը, բարդությունը, ամբողջականությունը, սինթեզը և ներդաշնակությունը:

Ինտեգրված դասերի հենքը միջառարկայական կապերի հաստատումն է և առարկաների «հոլիստիկ» ընկալումը: Ինչպես նշում է Ս.Ժ.Արշակյանը առարկաների միջև եղած կապը երեխաներին սովորեցնում է բացահայտել, ուսումնասիրել աշխարհը և նրա բազմազան երևույթները և, որ ամենակարևորն է, կապ ստեղծել այդ ամենի միջև: Սա բացատրվում է նրանով, որ երբ ուսուցումը կատարվում է կապերի միջոցով, փոխկապակցվածությունը հնարավորություն է տալիս վեր հանել պատճառները, ցույց տալ, թե ինչու դա այլ կերպ լինել չի կարող[4]:

Միավորված ծրագրերը կառուցվում են այնպես, որ մի ոլորտի գիտելիքները հիմնվում են մեկ այլ ոլորտից ձեռք բերված գիտելիքների վրա: Այս մոտեցումը ենթադրում է համալիր պլանավորում, գիտելիքների, փաստերի, գաղափարների ու երևույթների սահմանում և իմաստավորում տարբեր բնագավառներից, ինչպես նաև դրանց գնահատում, ինչը խթանիչ է սովորողների ճանաչողական և ստեղծագործական գործունեության համար: Այսպես, աշակերտի մոտ զարգանում են ճանաչողական գործունեությունը և քննական մտածողությունը, ձևավորվում է ստեղծագործական միտքը, որի արդյունքում վերջինս կկարողանա տարբեր բնագավառների գիտելիքները համախմբել, ինտեգրել մեկ հարցի շուրջ ու լուծել այն: Այլ կերպ ասած, ինտեգրված

[2] Безруких Е. Г. Интегрированное обучение как средство организации современного учебного процесса // Проблемы педагогики / Problems of pedagogy 2015, № 6 (7), с. 92-94.
[3] Дик Ю. И. Интеграция учебных предметов. / Ю. И. Дик. // Современная педагогика. - 2008. - № 9. - С. 42- 47.
[4] Արշակյան Ս.Ժ., Միջառարկայական կապերը տեխնոլոգիայի դասաժամին, Երևան 2014, 425 էջ, էջ 293

դասը միասնական մոտեցում է ցուցաբերում երևույթների ընկալմանը, գիտակցմանն ու ըմբռմանը:

Ուսումնական ծրագրի ինտեգրման գործընթացին բնորոշ է 4 հիմնական գիծ.

1. Աշակերտները և ուսուցիչները համատեղ պլանավորում են ուսումնական ծրագիրը և դրա իրագործման կարգը:

2. Ուսումնառության հիմքը թեմաներն են:

3. Ուսումնառությունն ընթանում է դպրոցական համայնքում ժողովրդավարական սկզբունքով:

4. Ուսումնական ծրագիրն այլևս կազմված չէ առանձին առարկաներից[5]:

Ինտեգրված դասի հիմնական նյութը դառնում է դասի համակարգային նշանակության բաղադրիչը: Համակարգային կարող է լինել ինտեգրված դասի միայն այն հատվածը, որը որոշում է առաջադրանքի նպատակը: Նման բաղադրիչներ են դառնում առանձին հասկացությունները, կանոնները, օրենքները, գաղափարները, մեթոդները կամ ուսումնառության միջոցները:

Ինտեգրման ձևը կախված է դասի նպատակից և համակարգային բաղադրիչի ընտրությունից: Որպեսզի հասկանանք ինտեգրված դասերը ինչպես են զարգացնում աշխարհայացքը կարևոր է հասկանալ՝ այն ինչ է: Աշխարհայացքը մարդ-աշխարհ հարաբերությունների շրջանակներում աշխարհի մասին և այդ աշխարհում մարդու տեղի և դերի մասին առավել ընդհանուր հայացքների համակարգ է: Այն մարդու ընդհանրացված գիտելիքների, հայացքների, համոզմունքների իդեալների, արժեքային կողմնորոշումների, ճանաչողության և գործունեության սկզբունքների միասնությունն է, որում արտահայտվում են բնության, հասարակության, մարդկանց նկատմամբ վերաբերմունքը, աշխարհի համընդհանուր ընկալումը, մարդու կենսական դիրքորոշումները, դրսևորումներն ու գործողությունները[6]:

Յու.Ամիրջանյանը նշում է, որ մարդու (աշակերտի) աշխարհայացքի ձևավորումը կախում ունի նրա անհատականությունից: Աշխարհայացքի ձևավորման մեջ մեծ դեր են կատարում աշակերտի ներքին բնությունը, տրամադրվածությունը, պատրաստակամությունը, առաջադրված նպատակին հասնելու վճռականությունը, որին նպաստում են կամքի ուժն ու համառությունը: Կամքը համոզմունքների ու զգացմունքների ամբողջականության մեջ աշակերտին մղում է հիմնավորված գործողությունների, արարքների[7] :

---

[5] Դավթյան Մ., Գրիգորյան Ք., Արնաուդյան Ա., Զոհրաբյան., Հովհաննիսյան Գ., Օհանովա Ի., Կրթակարգի մշակման և ինտեգրման մոտեցումներ (Ձեռնարկ ուսուցիչների համար), Երևան 2007., 319 էջ, էջ 58-59:

[6] Кочеткова О. Н., Быльнова Л. Ю: Интегрированный урок: теория и практика https://www.n-asveta.by/dadatki/int_urok.pdf(Վերջինմուտքը 01.10.2023., ժամը 16:20)

[7] Ամիրջանյան Յ.Ա., Սահակյան Ա., Ս., Մանկավարժություն (ուսումնական ձեռնարկ). Երևան 2005., 456 էջ, էջ 328:

Պետք է նաև հաշվի առնել այն փաստը, որ սովորողների աշխարհայացքի ձևավորման համար մեծ նշանակություն ունի գործնական բաղադրիչը: Ինտեգրված դասը հնարավորություն է ընձեռում աշակերտներին սովորել առանց առարկայական սահմանափակումների: Ինտեգրված դասը առանձնանում է նրանով, որ կապված է ոչ միայն դպրոցական առարկաների, այլ նաև հասարակության, հասարակական կյանքի, մշակույթի, նորագույն տեխնոլոգիաների հետ: Ինտեգրված դասապրոցեսը հնարավորություն է տալիս աշակերտներին ձեռք բերել և օգտագործել գիտության տարբեր բնագավառների հիմնական գիտելիքներ՝ զարգացնելով արդյունավետ ուսումնառություն:

Այսպես, ինտեգրված ծրագրի առանձնահատկություններ են՝ զարգացնել երեխաների վերաբերմունքը, հմտությունները և գիտելիքները, կապեր հաստատել ուսումնական ծրագրի բոլոր առարկաների միջև, գործունեություններ, որոնք ապահովում են մի շարք ունակություններ, կազմակերպել այնպիսի դասեր, որոնք նախաձեռնված և ուղղորդված են թե' ուսուցիչների և թե' երեխաների կողմից, ստեղծել աշակերտների քննադատական և ստեղծագործական մտածողության զարգացման համար համապատասխան միջավայր, համադրել առարկաները, օգտագործել նախագծեր ուսումնառության ընթացքում, խրախուսել բացի դասագրքից այլ աղբյուրների օգտագործումը, կապեր հաստատել տարբեր հասկացությունների միջև, ստեղծել սովորողների «ճկուն» խմբեր և տալ ինքնագնահատման և փոխադարձ գնահատման հնարավորություն:

1.2. Միջառարկայական կապերի հաստատումը, դրանց դերը

Մեր հետազոտական աշխատանքի այս հատվածում տեսականորեն կհիմնավորենք միջառարկայական կապերի դերը որպես ուսուցման մատչելիության, գիտելիքների որակի բարձրացման անհրաժեշտ պայման: Մենք բոլորս տեսնում և ընկալում ենք առարկաները, երևույթները և շրջապատող աշխարհն առհասարակ յուրովի: Եվ թե քանի տեսանկյունից կկարողանանք ներկայացնել տվյալ երևույթը կամ առարկան կախված է ստեղծագործական մտքից: Իսկ ստեղծագործական միտքը պայմանավորված է միջառարկայական կապերով:

Ուրեմն կարելի է ասել, որ միջառարկայական կապերի հիմնական դերը կայանում է նրանում, որ սովորողնետին հնարավորություն տրվի մտածել ոչ միայն մեկ առարկայի շրջանակներում, այլ նաև դրանից դուրս, այսինքն՝ տվյալ առարկայի շրջանակներում ուսումնասիրվող նյութը կապել մյուս առարկաների հետ և օգտագործել առօրյա կյանքում և այսպես ձևավորել ստեղծարար միտք:

Միջառարկայական կապերի դերը ուսուցման գործընթացում ունի երկար պատմություն: Պլատոնը կարևորում էր էմոցիոնալ, պրակտիկ և ինտելեկտուալ որակների համախմբումը, միավորելով երաժշտությունը և ռիթմը, դրաման և գրականությունը, փիլիսոփայությունը և քաղաքականությունը: Լուսավորության դարաշրջանի մեծ մտածողներից շատերը, ինչպիսիք են Կոմենսկին, Ռուսոն, Ֆրոբելը, կարևորում էին միջգիտական կապերը յուրովի: Այս գաղափարները զարգացան և մշակվեցին ավելի ուշ 19-20 դարերում առաջադեմներ Ջոն Դյուի, Մոնթեսորիի, Իսաակիի կողմից: Ինչպես նախկինում, այժմ ևս կրթական զեկույցները ցույց են տալիս, որ միավորված հմտությունները և միջառարկայական կապերը մեծ դեր են խաղում մարդու՝ որպես սոցիալական անձի ձևավորման գործում և ծառայում իրական կյանքում խնդիրների լուծմանը: Շատ ուսուցիչներ կարծում են, որ միջառարկայական կապերը ունեն մոտիվացիոն բնույթ և խթան են հանդիսանում ստեղծագործական մտքի զարգացման համար[8]:

Միջառարկայական կապերի դերն ու նշանակությունը ուսուցման գործընթացում հետևյալներն են.

- Նպաստել և խրախուսել աշակերտների ուսումը համակողմանի կերպով, իրենց կյանքի ավելի մեծ փորձի հետ համատեղ:
- Ցույց տալ տարբեր առարկաների մեջ եղած նմանությունները և տարբեր մեթոդներով որոշակիացնել այդ կապերը
- Ապահովել աշակերտների համար ակտիվ և փորձառական ուսուցում:
- Զարգացնել բովանդակալից համագործակցություն սովորողի և սովորեցնողի միջև:
- Նպաստել աշակերտների ճանաչողական, անհատական և սոցիալական զարգացմանը ինտեգրված ձևով;
- Ուսուցիչներին հնարավորություն ընձեռել ներգրավել նորարական մեթոդներ իրենց ուսուցման պլաններում:
- Ուսումնական ծրագրի բոլոր մակարդակներում ապահովել ուսուցչական կազմի համակարծություն:
- Մեկ առարկայի շրջանակներում ապահովել լայն ուսումնական նյութ ուսումնասիրվող կոնկրետ բնագավառը կապելով մյուս առարկաների հետ[9]:

Ամփոփելով կարելի է ասել, որ ուսուցման գործընթացում կարևոր տեղ պետք է հատկացնել միջառարկայական կապերին, որոնք ուսուցման հաջողության անհրաժեշտ

---

[8] Шилова Г.Ф., Ляпунова Л.В., Старостенков Н.В. Проблемы междисциплинарного подхода в современнойистории // Вестниксовременнойнауки. 2015. № 7. С. 77–81.

[9] Елкин О. М. Использование междисциплинарности в содержании общего образования // Ценности и смыслы. 2023. № 2 (84). С. 116-124.

պայմաններից են: Այժմ, երբմանկավարժականժամանակակիցտեխնոլոգիաներըլայնորենկյանքիենմտնում, հրամայականպահանջէդառնումկրթությաննպատակհամարելբազմակողմանիորենզարգացածանհատիկերտումը:Տարբերառարկաներիցերեխաներիստացածգիտելիքներըպետքէդիտվենփոխադարձկապերիմեջ, իսկդակարողէապահովվելմիջառարկայականկապերիշնորհիվ:Դրանցովենհամակարգվումաշակերտներիգիտելիքները, դրանքնպաստումեն, որերեխաներըմիևնույներևույթըդիտարկենտարբերտեսանկյուններից, ընդհանրացնողեզրակացություններանեն, ձևավորվինրանցաշխարհայացքը:Միջառարկայականկապերը, բնականաբար, պետքէարտացոլվենդասագրքերում:

Հասկացություններիմիջևփոխադարձկապերիըմբռնումըերեխաներիմեջձևավորումէտեսականմտածողությանսաղմեր, ընդհանրացումներկատարելուունակություն:Մենքընդհանրականաշխարհերեխաներիհամարբաժանելենքմասերի՝լեզու, մաթեմատիկանայլն:Այդարհեստականբաժանումըտվյալառարկանլավյուրացնելունէմիտված:Սակայնչպետքէմոռանալաշխարհընորիցամբողջականդարձնելուևերեխաներինամբողջականաշխարհիմասինգիտելիքտալումասին, այսինքն՝միջառարկայականկապերիմասին:Որքանսերտլինիուսուցանվողառարկաներիմիջևկապը, այնքանամբողջականկլինիերեխայիընկալումը, այնքանընդհանրականկլինինրագիտելիքըտվյալհասկացությանմասին:Միջառարկայականկապերիհաստատումըմիջինդասարաններումդասավանդողուսուցչհաշխատանքայինգործունեության անքակտելիմասնէ:Դասկսվումէուսուցչիկողմիցդասըպլանավորելուցնշարունակվումուսուցիչ–աշակերտհարաբերությանբոլորփուլերում:

ԳԼՈՒԽ 2. ԻՆՏԵԳՐՎԱԾ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ «ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՀՐ.ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ «ԿԱՆԱՉ ԴԱՇՏԸ» ՊԱՏՄՎԱԾՔԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

2.1. Միջառարկայական կապերի հաստատումն ըստ առարկայական չափորոշչի

Միջառարկայական կապերի հաստատմանը կարևոր տեղ է հատկացված նաև «Գրականություն» առարկայի առարկայական չափորոշչով: Առարկայական չափորոշիչը սահմանում է, որ 21-րդ դարում հանրակրթությունը նպատակ ունի ձևավորելու որոշակի կարողունակություններով զինված հայ քաղաքացի, որը պատրաստ է դիմագրավելու ցանկացած փոփոխության, քննական վերլուծության ենթարկելու իրադրությունը, մշակելու քայլեր, առաջարկելու փոփոխություններ, գործելու հանուն հանրության, հանուն իր երկրի բարօրության, պետականության ամրապնդման և բարգավաճման: Հայոց (մայրենի) լեզվի, գրականության, հայ գրականության դասավանդումը բացառիկ դեր ունի անհատի, պետականամետ հայ քաղաքացու արժեքային համակարգի, նրա բարոյական նկարագրի ձևավորման գործում: Հայոց լեզվի և գրականության դասավանդման ընթացքում մշակվում և ամրապնդվում է այն դիրքորոշումը, որ հայոց լեզուն՝ որպես ՀՀ պետական լեզու, անկախ պետականության պահպանման, զարգացման կարևորագույն երաշխիքն է, որը անփոխարինելի դեր ունի ինչպես հենց իր՝ սովորողի, այնպես էլ ողջ հայ ժողովրդի կյանքում: Սովորողը հայոց լեզվից, գրականությունից գիտելիք, որոշակի հմտություններ ձեռք բերելով հանդերձ՝ ուսումնասիրում է իր մայրենի լեզուն՝ որպես իր ինքնության բացահայտման և դրսևորման, որպես հաղորդակցման և համագործակցության, որպես այլ ոլորտներից գիտելիք ձեռք բերելու, օտար լեզու սովորելու անփոխարինելի միջոց: Մայրենի լեզվի, գրականության ուսումնասիրությունը ձևավորում է որոշակի վերաբերմունք և դիրքորոշում հայեցի ոգու, ազգային արմատների պահպանման և ամրապնդման համար, ինչպես նաև հնարավորություն է տալիս խորությամբ ընկալելու հայ մարդու արժեքային համակարգը, ժողովրդի կենցաղը, նիստուկացը, հավատալիքները, ավանդույթները, սովորույթները: Ազգային ոգին և մշակույթը արժևորելու, գնահատելու, պահպանելու, հաջորդ սերնդին փոխանցելու պատրաստակամությամբ և գործուն մասնակցությամբ դաստիարակվում է հայրենասեր, պետական մտածողություն ունեցող, օրինապահ, բարեկիրթ, ներդաշնակ զարգացած անձնավորություն, որը պատրաստ է սովորելու ողջ կյանքի ընթացքում:[10]

[10] Հանրակրթական ուսումնական հաստատություններում «Մայրենի» 1-6-րդ, «Հայոց լեզու» 7-12-րդ, «Գրականություն» 7-9-րդ և «Հայ գրականություն» 10-12-րդ դասարանների առարկայական չափորոշիչը հաստատելու մասին Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 30 մարտի 2023 թվականի N 44-Ն հրամանը.Հասանելիությունը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=176068 (Վերջին մուտքը՝ 05.10.2023., ժամը 19:20)

Գրականությունը խոսքի արվեստ է. գրական երկի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս հասկանալու և վերլուծելու տեքստի ենթիմաստը, հեղինակի ասելքը, գրողի՝ տեքստ ստեղծելու վարպետությունը, խոսքի ոճական առանձնահատկությունները, պատկերավոր խոսքի գեղագիտությունը [11] : Գրական տեքստի համակողմանի ուսումնասիրության ընթացքում զարգանում են սովորողի քննական-դատողական և պատկերավոր մտածողությունը, վերլուծելու, համադրելու, ընդհանրացնելու, եզրահանգումներ անելու կարողությունը: Գրականության ուսումնասիրության նպատակը սովորողին հայերեն խոսքի գեղագիտությանը, խոսքի արվեստին հաղորդակից դարձնելն է: Հայ գրականության երկերի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս հարստացնելու սովորողի բառապաշարը, պատկերավոր մտածողությունը, երևակայությունը, ստեղծագործական կարողությունները, ձևավորել գրական ճաշակ և ընթերցասիրություն:

Գրական և ոչ գրական, արձակ և չափածո տեքստերի ընթերցումը, քերականական-ոճաբանական վերլուծությունը, դրանց կազմում հանդես եկող առանձին բառերի իմաստային, բառակազմական և ձևաբանական քննությունները, օտար լեզուներից թարգմանությունները զարգացնում են աշակերտի լեզվամտածողությունը, ձևավորում են որոշակի վերաբերմունք մայրենի և օտար լեզուների հանդեպ, սովորեցնում են հարգել թե՛ սեփական, թե՛ օտար մշակույթները, գնահատել դրանք որպես համամարդկային մնայուն արժեքներ:

Գրականության ուսումնասիրումը մարդու հոգեբանությունը բացահայտելու միջոց է. գրական կերպարների արարքների դրդապատճառների, բնավորության վերլուծությունը, նրանց հոգեբանության մեջ թափանցելու ունակությունը սովորողին հնարավորություն են տալիս հասկանալու, ճանաչելու ոչ միայն իր շուրջը գտնվող մարդկանց, այլ նաև ինքն իրեն: Գրական երկից քաղած դասերի շնորհիվ սովորողը կարողանում է կյանքում հարաբերություններ հաստատել, ճիշտ հաղորդակցվել և համագործակցել մարդկանց հետ, համատեղ աշխատել, ստեղծել նյութական և հոգևոր արժեքներ՝ հանուն հայրենի պետության, հանրության բարօրության[12]:

Մեր ուսումնասիրության շրջանակներում նախատեսել ենք դիտարկել 7-րդ դասարանի դասագրքում զետեղված 1 դասանյութ: Հետևաբար ներկայացնենք առարկայական չափորոշչով նախատեսված դրույթները այդ դասարանի վերաբերյալ: 7-9-րդ դասարաններում «Գրականություն» առարկայի բովանդակությունը կազմելիս հաշվի են առնվում սովորողի՝ տարիքային առանձնահատկություններով պայմանավորված հետաքրքրությունները,

[11] Գրականության տեսության արդի խնդիրներ: Ուսումնական ձեռնարկ. -Եր.: ԵՊՀ հրատ., 2016, 330 էջ, էջ 15:
[12] Ավետիսյան Զ. Գրական ստեղծագործության հոգեբանություն Երևան, ԵՊՀ հրատ., 2011, 240 էջ, էջ 10:

հոգեբանությունը, ինչպես նաև կառուցվածքային, համակարգված և քննական մտածողություն ձևավորելու շարունակականության ապահովումը: Գրական երկերի ուսումնասիրությունը նպաստում է ընկալելու ազգային գեղարվեստական մտածողությունը, հայ ժողովրդի պատմական ճակատագրի, հայ մարդու կերպարի մարմնավորումը, ավանդույթների շարունակականությունը, գրողի աշխարհայացքի, նրա երկի հասարակական նշանակությունը և արդիականությունը:

Հայ և օտարերկրյա գրականության ընտրովի նմուշների ուսումնասիրության միջոցով սովորողները ծանոթանում են գրական սեռեր, ժանրեր, երկի կառուցվածք, կոնֆլիկտ, կերպար եզրույթներին, պատասխանում են հիմնական և առնչակից գաղափարական հարցադրումներին, բացատրում են գրական երկում կոնֆլիկտի, կերպարի զարգացումները, տարբերում են հեղինակի և պատմողի կերպարները, հասկանում են պատճառահետևանքային, միջառարկայական կապերն ու առնչությունները, կազմում են բանավոր և գրավոր խոսք՝ կիրառելով հայոց լեզվից և գրական երկից սովորածը, ինչպես նաև, օգտագործելով ժամանակակից տեխնիկական միջոցներն ու հնարավորությունները:

Հայոց լեզվի և գրականության դասավանդման գործընթացը զուգակցվում է այլ առարկաների հետ կապերի և առնչությունների բացահայտումներով, որոնք ենթադրում են տարբեր առարկաներից համատեղ դասաժամեր, դաս-էքսկուրսիաներ, դաս-բեմականացումներ, հանդիպումներ տարբեր մասնագիտությունների անձանց հետ, միջառարկայական նախագծեր, հետազոտական աշխատանքներ և դրանց ամփոփումներ բանավոր և գրավոր շարադրանքներով, սահիկաշարերի ցուցադրումով, մեդիայի բազմաբնույթ հնարավորությունների կիրառումով:

Նյութատեխնիկական աջակցության գլխավոր կենտրոնը դպրոցական գրադարանն է, որը պիտի տրամադրի համապատասխան նորագույն գրականություն ինչպես ուսուցիչներին, այնպես էլ սովորողներին: Դպրոցական գրադարանը պետք է մատչելի նյութերով ապահովի սովորողներին առարկայական և միջառարկայական նախագծային, հետազոտական միավորներ մշակելու և իրականացնելու, տեղեկատվական գրագիտության հմտությունների զարգացումն ապահովելու համար: Գրադարանը հատկապես կարևոր է համաշխարհային գրականության ինչպես թարգմանական, այնպես էլ դպրոցում դասավանդվող տարբեր օտար լեզուներով նմուշների ապահովման գործում:

2.2. Հր.Մաթևոսյանի «Կանաչ դաշտը» պատմվածքիդասավանդումըևմիջառարկայականկապերիհաստատումը

Ինտեգրվածուսուցումնապահովումէդասավանդմաննորորակուարդյունավետություն՝ տարբերառարկաներիցգիտելիքների, ուսումնականնյութերիևտեխնոլոգիաներիմիասնացմանճանապարհով: Ներկայացնենքդասավանդմանմերփորձը:

Դասարանը՝ 7-րդ

Գերիշխողառարկան՝ «Գրականություն»

Դասի թեման՝ Հր.Մաթևոսյան «Կանաչ դաշտը» պատմվածք[13]

Ինտեգրվածառարկաներ՝ «Պատմություն», «Հայոց լեզու», «Ֆիզիկա», «Կենսաբանություն», «Հասարակագիտություն»

Խնդիրները՝

ա) Աշխատանքիկատարմանպլանավորում:

բ) Դասագրքից օգտվելու կարողունակության ձևավորում:

գ) Դասանյութիընկալումնկարծիքիարտահայտմանկարողունակությանձևավորում:

դ) Դասանյութումբովանդակվածխրատներիառօրյակենսագործունեությանմեջօգտագործելուհնար ավորտարբերակներիառաջադրում:

Նպատակները՝

ա) «Կանաչ դաշտը» պատմվածքի կառուցվածքի և բովանդակության իմացություն:

բ) Պատմվածքի հիմնական գաղափարի իմացություն:

գ) Պատմվածքի գործողությունների մասին պատկերացում կազմելը:

դ) Պատմվածքի կերպարների բնութագրում:

ե) Պատմվածքից քաղած դասերը[14]:

Կահավորումը

- Դասագիրք,
- մատիտ, քանոն,
- A4 ֆորմատի թղթեր:

Դասի ընթացքը

[13]Նիկողոսյան Ա., Վարդանյան Ա. Գրականություն: Հանրակրթական դպրոցի 7-րդ դասարանի դասագիրք.- Եր., Անտարես, 2023., 176էջ, էջ 115-126

[14]Նիկողոսյան Ա., Վարդանյան Ա. Գրականություն 7: Մեթոդական ուղեցույց.- Եր., Անտարես, 2023., 102 էջ, էջ 75-76:

Պատմվածքի ընթերցումից առաջ խթանման փուլում սովորողների հետ քննարկում ենք հետևյալ հարցերը.

1. Ինչ ստեղծագործություններ են հիշում, որտեղ գործող անձեր են կենդանիները և հատկապես ձիերը։

2. Արդյո՞ք այդ ստեղծագործություններում կենդանիները իրենց իրական հատկանիշներով են ներկայանում, թե՝ փոխաբերաբար ներկայացնում են մարդկանց ու մարդկային աշխարհը։

Հարցադրումներից հետո սովորողների ուշադրությունը հրավիրում ենք պատմվածքի նկարին։ Առաջարկում ենք նրանց կատարել «Մտածիր և քննարկիր դասընկերներիդ հետ» առաջադրանքը։ Առաջադրանքի կատարումից հետո սովորողները սկսում են հատվածաբար կարդալ պատմվածքը։

Պատմվածքը կարելի է բաժանել մասերի ըստ թեմատիկ-գաղափարական ամփոփման։ Այսպես, առաջին հատվածը կարելի է վերնագրել՝ *«Կայծակը»*։ Առաջին հատվածում գործող «անձը» կայծակն է։ Ապա աստիճանաբար գործողության մեջ են մտնում մյուս կերպարները՝ քուռակը և մայրը։ Անհրաժեշտ է աշակերտների ուշադրությունը հրավիրել առաջին հատվածի վերջին մի քանի տողերի վրա, որոնք կարևոր են ամբողջ պատմվածքի ընկալման համար. *«Քուռակը խրտնեց ու վազեց դեպի մայրը, բայց շատ էր վախեցել, մորը չէր տեսնում, ուրիշ կողմ էր փախչում։ Մայրն ուզեց գնալ դեպի քուռակը, բայց վզի պարանը խանգա-րեց։ Եվ մայրը քուռակին խրխինջով կանչեց իր մոտ»։*

Պատմվածքի երկրորդ հատվածը կարելի է անվանել *«Քուռակը»*։ Այստեղ ավելի մանրամասն ներկայացվում է ձիու քուռակը։ Արտաքին մանրամասն նկարագրության ընթերցումը կարելի է ուղեկցել քուռակին նկարելու հանձնարարությամբ. *«Դա աստղազարդ քուռակ էր, այսինքն՝ ծածկված էր եղյամի հատիկների նման աստղիկներով։ Ոտքերը բարակ ու երկար էին։ Ետևի աջ ոտքի սրունքը սպիտակ էր։ Ինքը կարծես եղյամոտ էր, ետևի աջ ոտքը՝ ձյունոտ։ Վիզը բարակ ու երկար էր։ Գլուխը փոքր էր, ճակատին կլորիկ սպիտակ կար՝ աստղածաղկի նման։ Այդ հովտի առվից ջուր խմելու էին գալիս եղնիկներ, ուլեր ու գառներ, նաև՝ այդ ձին, որ շատ քուռակներ էր ունեցել, բայց այս քուռակը այս կանաչ դաշտի ամենագեղեցիկ արարածն էր։ Բաշը և պոչը սև էին»։*

Պատմվածքի հաջորդող հատվածը կարելի է համարել հանգույց, որտեղից սկսվելու է ստեղծագործության հիմնական բախումը։ Հեղինակն այդ բախումը չի պատկերում միանգամից, այլ աստիճանաբար, տարբեր միջոցներով ներկայացնում քուռակին սպառնացող վտանգի մոտենալը։

Երրորդ հատվածը կարելի է վերնագրել ենք *«Վտանգի բույրն ու ձայնը»*: Հատվածն ընթերցելուց հետո կարելի է հանձնարարել աշակերտներին գտնել հատվածի ամենակարևոր մասը: Օրինակ. *«Հովտում, համենայն դեպս, վտանգ կար: Օդում այդ վտանգից ձայն չկար, հովտում այդ վտանգը չէր երևում, քամու մեջ այդ վտանգի հոտը չկար, բայց ձին չէր կարողանում արածել: Պառավ կարմիր ձին սկսեց զայրանալ: Կարմիր պառավ ձին զայրանում էր այն բանի համար, որ հովտում թշնամի կար, բայց այդ թշնամին չէր զգացվում, չէր լսվում և չէր երևում»:*

Չորրորդ հատվածը վերնագրել ենք՝ *«Հակառակորդը»*: Այստեղ է, որ գործողության մեջ է մտնում թշնամին: Հատվածի ընթերցումից առաջ պետք է հարցերով ճշտել, թե նախորդող հատվածներից զգալի է, որ բախում է հասունանում: Պետք է հանձնարարել երեխաներին առանձնացնել հատվածը բովանդակապես ամփոփող տողն ըստ նրանց: Օրինակ,*«Հովիտը դավաճանում էր ձիուն, հովտում թշնամի կար, բայց հովիտը չէր մատնում թշնամու ձայնը և թշնամու հոտը»* նախադասությունը:

Հինգերորդ հատվածը կարելի է վերնագրել*«Մայրը»*: Այս հատվածի կենտրոնական մեջբերումն է՝ *«Քուռակը ճչաց ու վեր ցատկեց, և այդ ժամանակ մայրը ծառս եղավ և ամբողջ ծանրությամբ ու ամբողջ կատաղությամբ ձգվեց դեպի գայլն ու քուռակը, և պարանը կտրվեց ու մտրակվեց մոր ոտքերին: Մայրը գնաց ամբողջ թափով, ամբողջ ուժով, ամբողջկատաղությամբ ու ամբողջ սիրով: Նա շատ արագընթաց զամբիկ էր, բայց իր կյանքում երբեք այդպես թռիչքի պես չէր սլացել»:*

Յուրաքանչյուր հատվածի համար պետք է առանձնացնել և սովորողներին տալ հարցեր: Քանի որ մենք նպատակադրել ենք վարել ինտեգրված դաս, հետևաբար ամեն հատվածում կներառենք գոնե մեկ միջառարկայական կապ արտահայտող հարց:

Առաջին հատվածին վերաբերող հիմնահարցերը ներկայացնում ենք ստորև.

Ա. Պատմվածք և կերպարներ

1. Կաղնին շնորհակալ է ժայռին: Ինչու՞:
2. Կաղնին, մասրենին ու ժայռը հանգիստ էին: Ինչու՞ վտանգ չէին զգում:
3. Դիտարկել քուռակի հարցն ինքն իրեն՝ լսելով մոր խրխնջոցը:

Բ. Միջառարկայական հարցեր (միջառարկայական կապը հայոց լեզվի, ֆիզիկայի հետ)

1.Տալ *կայծակ, քուռակ, մայր* բառերի լեզվական մեկնաբանությունը:

2.Տալ *կայծակի որպես բնության երևույթի ֆիզիկական մեկնաբանությունը:*

3. Ի՞նչ մակդիրներով է պատմվածքում ներկայացվում քուռակը:

4.Բերել որոշ համեմատությունների օրինակներ, որոնք կան պատմվածքում:

Երկրորդ հատվածին վերաբերող հիմնահարցերը ներկայացնում ենք ստորև.

Ա. Պատմվածք և կերպարներ

1. Տալ քուռակի արտաքին նկարագիրը սեփական բառերով:

Բ. Միջառարկայական հարցեր (միջառարկայական կապը կենսաբանության, հասարակագիտության հետ)

1. Տալ *քուռակի*կենսաբանականնկարագիրը:

2. Դիտարկել մարդու փոխգործակցությունը բնության սուբյեկտի՝ քուռակի հետ:

Երրորդ հատվածին վերաբերող հիմնահարցերը ներկայացնում ենք ստորև.

Ա. Պատմվածք և կերպարներ

1. Ներկայացնել վտանգի հասկացությունը, ազդեցությունը բնության վրա և գաղափարը պատմվածքում:

Բ. Միջառարկայական հարցեր (միջառարկայական կապը կենսաբանության, ֆիզիկայի հետ)

2. Տալ *ձիու* կենսաբանական նկարագիրը, տարիքին բնորոշ առանձնահատկությունները, կենսագործունեությունը բնության մեջ:

3. Դիտարկել *քամու* ՝ որպես ֆիզիկական երևույթի առանձնահատկությունները:

Չորրորդ հատվածին վերաբերող հիմնահարցերը ներկայացնում ենք ստորև.

Ա. Պատմվածք և կերպարներ

1. Ներկայացնել հակառակորդի կերպարը պատմվածքում, դուրս բերել հետևանքները:

Բ. Միջառարկայական հարցեր (միջառարկայական կապը հայոց լեզվի, պատմության հետ)

2. Տալ *հակառակորդ կամ թշնամի բառերի* լեզվական մեկնաբանությունները:

3. Պատմական դիտարկում անցկացնել և ուսումնասիրել մեր պետության հակառակորդներին:

Հինգերորդ հատվածին վերաբերող հիմնահարցերը ներկայացնում ենք ստորև.

Ա. Պատմվածք և կերպարներ

1. Ներկայացնել մոր կերպարը պատմվածքում:

Բ. Միջառարկայական հարցեր (միջառարկայական կապը հայոց լեզվի, պատմության հետ)

2. Տալ *մայր բառի* լեզվական մեկնաբանությունները, փորձել գրել, թե հատկանիշ ցույց տվող որ բառերով կարելի է նկարագրել մորը:

3. Պատմական դիտարկում անցկացնել և ուսումնասիրել մեր պատմության ընթացքում դրսևորված մայրական կերպարները, օրինակ, Սոսե մայրիկի կերպարը:

Սովորողները կատարում են նաև լուսանցքի առաջադրանքները: Դրանցից մի քանիսը պետք է մանրամասնորեն կատարել դասարանում, բացատրել աշակերտին կատարման եղանակը, իսկ մնացածը հանձնարարել որպես ինքնուրույն յուրացման աշխատանք:

Այնուհետև սովորողները ներկայացնում են իրենց կատարած աշխատանքը հարցերի մասով: Կարելի է, որ առաջադրանքները տրվեն ըստ ունակությունների և հնարավորությունների, սակայն խրախուսելի է, որ բոլորն էլ ինչ-որ չափով կատարեն տվյալ առաջադրանքը: Ներկայացնելուց հետ ուսուցիչը դիտարկումներ է անում: Այնուհետև տրվում են ցուցումներ խմբային և անհատական աշխատանքի համար:

Արդյունքում աշակերտը կիմանա.

- պատմվածքի բովանդակությունը, կերպարային ներկապնակը, նրանց բնութագրիչները,
- պատմվածքի գործողությունների միջավայրը, դրա հասարակագիտական նկարագիրը,
- պատմվածքի հիմնական դասերը,
- պատմվածքում առկա բնական երևույթների, կերպարների լեզվառճական նկարագիրը, կենսաբանական և ֆիզիկական բնութագրությունը,
- պատմվածքում առկա կերպարների հնարավոր համադրումը պատմական կերպարներին:

Աշակերտը կկարողանա.

- ինքնուրույն վերարտադրել պատմվածքի բովանդակությունը,
- առանձնացնել կերպարները և բնութագրել նրանց տարբեր գիտակարգերի շրջանակներում,
- արտահայտիչ ընթերցել տեքստը,
- մեկնաբանել պատմվածքի կապն իր ապրած ժամանակաշրջանի հետ:

Այսպիսով, այս մի փոքր պատմվածքի դիտարկմամբ պարզ դարձավ, որ եթե դասն ինտեգրված չլիներ, աշակերտի կարողունակությունները բավականին քիչ կլինեին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով մեր կողմից կատարված տեսամեթոդական ուսումնասիրությունները և գործնական աշխատանքի արդյունքները՝ նշենք, որ ինտեգրված դասը հատուկ կազմակերպված դաս է, որի նպատակը կարող է հասանելի լինել միայն տարբեր առարկաների գիտելիքների միավորումից՝ ուղղված դեպի ինչ-որ խնդրի դիտարկմանը և լուծմանը: Ինտեգրված դասերը աշակերտին տալիս են աշխարհի, առարկաների և երևույթների փոխկապակցվածության մասին բավականին լայն և վառ պատկերացում: Հիմնական շեշտը այստեղ դրվում է ոչ այնքան որոշակի գիտելիքների ընկալման, որքան ստեղծագործական մտածողության զարգացման վրա: Ինտեգրված դասերը թույլ են տալիս օգտագործել բոլոր ուսումնական առարկաների բովանդակությունը, ուշադրություն դարձնել գիտության տարբեր ճյուղերին, ենթադրում են սովորողների ստեղծագործական ակտիվության պարտադիր զարգացում:

Ինտեգրված դասի կառուցվածքը սովորական դասից տարբերվում էսահմանված հստակությամբ, կոմպակտությամբ, ուսումնական նյութի համառոտությամբ, տրամաբանական փոխհամաձայնեցմամբ, դասի յուրաքանչյուր փուլում ինտեգրված առարկաների փոխկապվածությամբ, դասի ժամանակ օգտագործվող նյութի մեծ տեղեկատվական հզորությամբ: Ինտեգրված դասերը միջառարկայական կապերի համակարգում կարևոր մաս են կազմում: Դրանք նպատակահարմար է անցկացնել ընդհանրացնող դասերի ժամանակ, որում ի հայտ են գալիս երկու կամ ավելի առարկաների համար կարևոր խնդիրներ:

Հատկապես 21-րդ դարում, գիտական և տեխնոլոգիական այս մեծ վերելքների ու զարգացումների դարաշրջանում, շատ դժվար է բավարարել նոր սերնդի պահանջները: Ուսումնական պլանը կազմելիս այժմ ուսուցիչների ուսերին դրված է շատ մեծ պահանջ՝ ապահովել հետաքրքիր և արդյունավետ դաս: Ուսումնական պլան կազմելու այս բարդ գործում շատ մեծ է միջառարկայական կապերը պահելու գործոնը: 21-րդ դարում սովորողները ակնկալում են ստանալ կիրառական գիտելիքներ, այնպիսիք՝ որ կկարողանան օգտագործել առօրյա կյանքում: Հետևապես, ուսումնական պլաններում շատ կարևոր է կապը շրջակա աշխարհի հետ և կապը դասավանդվող առարկաների միջև:

Միջառարկայական կապերը խթանում են ստեղծագործ մտքին: Այսպես աշակերտները սովորում են հարցին նայել տարբեր տեսանկյուներից: Ստեղծելով կապեր առարկաների միջև ուսուցիչը աշակերտների մոտ ձևավորում է տրամաբանելու սովորություն: Այսպիսով ինտեգրված ուսուցում սովորողի մոտ ձևավորում է լայն աշխարհայացք:

Միջառարկայական կապերը ապահովում են հետաքրքիր բազմաբովանդակ դասապրոցես: Միայն տվյալ առարկայի շրջանակներում կազմակերպված դասապրոցեսը միապաղաղ է և սահմանափակում է սովորողների մտածողությունը: Հետաքրքիր դասի պլան կազմելու համար պետք է կոտրել այս միապաղաղությունը՝ ապահովելով ինտեգրված ուսուցում:

Միջառարկայական կապերը ապահովում են ուսուցման բարձր որակ: Այս կապերը ուսուցումը դարձնում են ավելի արդյունավետ, քանի որ այս սկզբունքով կրթվում և դաստիարակվում են կյանքին պատրաստ աշակերտներ:

Համոզվելով, որ ինտեգրված ուսուցումն առանձնակի կարևորություն ունի, առաջարկում ենք

առանձնակինշանակությունտալինտեգրվածդասընթացիուսուցմանշրջանակներումնորմատիվ-իրավականակտերիմշակմանը,

որոնցմիջոցովինարավորինսկթեթևացվիուսուցիչներիաշխատանքայինբեռը:

Հնարավորությանդեպքումմեթոդականուղեցույցներումդասիպլաններումառանձնացնելմիջառարկայականկապերինվերաբերողհատվածներ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հանրակրթական ուսումնական հաստատություններում «Մայրենի» 1-6-րդ, «Հայոց լեզու» 7-12-րդ, «Գրականություն» 7-9-րդ և «Հայ գրականություն» 10-12-րդ դասարանների առարկայական չափորոշիչը հաստատելու մասին Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 30 մարտի 2023 թվականի N 44-Ն հրամանը.Հասանելիությունը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=176068
2. Ամիրջանյան Յ.Ա., Սահակյան Ա., Ս., Մանկավարժություն (ուսումնականձեռնարկ). Երևան 2005., 456 էջ, էջ328:
3. Ավետիսյան Զ. ԳրականստեղծագործությանհոգեբանությունԵրևան, ԵՊՀ հրատ., 2011, 240 էջ, էջ 10:
4. Արշակյան Ս.Ժ., Միջառարկայականկապերըտեխնոլոգիայիդասաժամին, Երևան 2014, 425 էջ, էջ 293
5. Գրականությանտեսությանարդիինդիրներ: Ուսումնականձեռնարկ. -Եր.: ԵՊՀ հրատ., 2016, 330 էջ, էջ 15:
6. Դավթյան Մ., Գրիգորյան Ք., Արնաուդյան Ա., Զոհրաբյան., Հովհաննիսյան Գ., Օհանովա Ի., Կրթակարգիմշակման և ինտեգրմանմոտեցումներ (Ձեռնարկուսուցրիչներիհամար), Երևան 2007., 319 էջ, էջ 58-59:
7. Նիկողոսյան Ա., Վարդանյան Ա. Գրականություն: Հանրակրթական դպրոցի 7-րդ դասարանի դասագիրք.- Եր., Անտարես, 2023., 176 էջ, էջ 115-126
8. Նիկողոսյան Ա., Վարդանյան Ա. Գրականություն 7: Մեթոդականուղեցույց.- Եր., Անտարես, 2023., 102 էջ, էջ 75-76:
9. Безруких Е. Г. Интегрированное обучение как средство организации современного учебного процесса // Проблемы педагогики / Problemsofpedagogy 2015, № 6 (7), с. 92-94.
10. Дик Ю. И. Интеграция учебных предметов. / Ю. И. Дик. // Современная педагогика. - 2008. - № 9. - С. 42- 47.
11. Елкин О. М. Использование междисциплинарности в содержании общего образования // Ценности и смыслы. 2023. № 2 (84). С. 116-124.
12. Кочеткова О. Н., Быльнова Л. Ю: Интегрированный урок: теория и практика https://www.n-asveta.by/dadatki/int_urok.pdf

Шилова Г.Ф., Ляпунова Л.В., Старостенков Н.В. Проб